ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք.Երևան **«4» Հունիսի, 2018 թվական**

«Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԻՀ ՀԿ), ի դեմս գործադիր տնօրեն Ա.Ներսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ն (այսուհետ՝ ԻՀՀՀ ՀԿ), ի դեմս նախագահ Ի.Մկրտումյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում համատեղ կոչվելով **Կողմեր**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն ապահովում են փոխադարձ տեղեկատվության փոխանակում ինտերնետային կապի փաստաթղթերի, համաձայնագրերի, համացանցում հայկական և համաշխարհային միտումների վերաբերյալ:
2. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն անց են կացնում ինտերնետի հետ կապված քննարկումներ:
3. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն իրականացնում են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների, ինչպես նաև համացանցի հետ կապված խնդիրների վերաբերյալ հայեցակարգային նախագծերի մշակման աշխատանքները:
4. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն Հայաստանի կառավարության մարմիններին տրամադրում են համացանցային-վերլուծական նյութեր՝ կապված ինտերնետի հետ կապված խնդիրների հետ:
5. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն խրախուսում են իրենց ներկայացուցիչների համատեղ մասնակցությունը տեղական և միջազգային համաժողովներին, կոնֆերանսներին, սեմինարներին և այլ միջոցառումների՝ ինտերնետային և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:
6. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն համատեղ կազմակերպում են Հայկական Ինտերնետ Կառավարման Համաժողովները (ARMIGF):
7. ԻՀՀՀ ՀԿ-ն և ԻՀ ՀԿ-ն համատեղ մասնակիցներ են ուղարկում համաշխարհային IGF համաժողովներին:
8. ԻՀ ՀԿ-ն անհրաժեշտության դեպքում ֆինանսական աջակցություն է տրամադրում ԻՀՀՀ ՀԿ-ին՝ աշխատակազմի աշխատավարձերը վճարելու համար:
9. ԻՀ ՀԿ-ն աջակցում է ԻՀՀՀ ՀԿ-ի այն նախագծերին, որոք արժանացել են համաշխարհային Ինտերնետ հասարակության դրամաշնորհներին:
10. ԻՀՀՀ ՀԿ-ն գործուղում է 3 ներկայացուցիչներ ԻՀ ՀԿ-ի խորհրդին, Հայաստանի բարձրագույն մակարդակի տիրույթների կառավարմանը մասնակցելու համար:
11. ԻՀՀՀ ՀԿ-ն ակտիվորեն մասնակցում է հայկական բարձր մակարդակի տիրույթների առաջխաղացմանը:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

12. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն համաձայանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև կարող է դադարեցվել ցանկացած կողմի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին գրավոր ծանուցման միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ինտերնետ հանրություն» ՀԿ	**«Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ**
Գտնվելու վայրը՝ ՀՀ, 0012, ք.Երևան, Ա.Խաչատրյան 17շ., բն.3	Գտնվելու վայրը՝ ՀՀ, 0012, ք.Երևան, Ա.Խաչատրյան 17շ., բն.3
ՀՎՀՀ 00004302	ՀՎՀՀ 00181988
Հ/Հ 19300 7000014	Հ/Հ 19300 68433720100
Բանկ «Կոնսերվատիվ բանկ» ՓԲԸ	Բանկ «Կոնսերվատիվ բանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն Արման Ներսիսյան	Նախագահ Իգոր Մկրտումյան
(ստորագրություն)	(ստորագրություն)